ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով եւ Ազգային ժողովի աշխատակարգի 87-րդ կետով, հանձնաժողովը որոշում է.

1. 2023 թվականի փետրվարի 24-ին, ժամը 11:00-16:00-ն Ազգային ժողովի նիստերի դահլիճում հրավիրել խորհրդարանական լսումներ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

2. Հաստատել խորհրդարանական լսումների օրակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆ**

14-ը փետրվարի 2023 թ
քաղ. Երեւան
ԱՍՀ- -Լ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հաստատված է

Ազգային ժողովի աշխատանքի և

սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի

14-ը փետրվարի 2023թ ԱՍՀ- *-Լ որոշմամբ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ

24-ը փետրվարի 2023թ.

Ազգային ժողովի նիստերի դահլիճ

10:00-11:00	Մասնակիցների գրանցում
11:00-11:20	Բացման խոսք **Հերիքնազ Տիգրանյան** *Աժ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ* **Ջեյմս Դե Ուիթ** *Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ/ IRI) տնօրեն*
11:20-12:00	ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների հիմնական բովանդակությունը **Զեկուցող Ռուբեն Սարգսյան** *ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարար տեղակալ*
12:00-13:30	Հարց ու պատասխան *Հարցի և պատասխանի տևողությունը՝ մինչև 2-ական րոպե* *Արձագանքի համար՝ մինչև 1-ական րոպե*
13:30-15:30	Մասնակիցների ելույթներ *Ելույթի տևողությունը մինչև 5 րոպե*
15:30-15:50	Զեկուցողի եզրափակիչ ելույթ
15:50-16:00	Ամփոփում